

գոր Արուսահլ բւ՝ Հայոց կոչէ, և անզւ. թարգմանիչն steward of the Armenians գրէ, կարծեմ փակագծեկոցս մէկը նշանակէ, և որ և է կերպով՝ գործակալ մի էր Հայոց: Իր ըրած գործն այլ (որ քիչ մի մութ է) գրելէն ետեւ, պատմիչն յիշէ եկեղեցւոյն նորոգութիւնն Իպն-Շարաֆի ձեռք և Աղեքսանդրիոյ պատրիարքէն օժուելը, և անոր աթոռանիստ ըլլալը, ուր տեղ Հարաթ-ար-Ռում (հոովմէաբնակ) թաղի Ս. Աստուածածնի եկեղեցիէն քահանայք գային պաշտօնը կատարելու. յիշէ և եկեղեցւոյն պատկերաց նկարողները, որոց ամենուն գործն աւարտեր է յամին 1177:

« Այս ատեններս եկաւ ի Հայոց եպիսկոպոս մի, հետն այլ երեք քահանայ, Հայոց թագաւորէն և պատրիարքէն ղրկուած. երկուքէն այլ մէկ մէկ պատգամ, և երկու այլ թուղթ բերելով. որոց մէկը գրած էր Մէլիք Սալահատտին, միւսը՝ անոր եղբայրն Մէլիք Սայֆատտին Ապուպէքը, առ Մէլիք Թաքիատտին. որք պատուիրէին այսոր՝ իրենց թղթերովը, պատուով ընդունիլ զեպիսկոպոսը. և Հայոց երկու եկեղեցիները՝ որ յԱյգեստանն և ի Զուհրի՝ դարձնել տալ անոնց: Եպիսկոպոսն իջաւ յեկեղեցի Ս. Յովհաննու